

Օգտվեք այս գործիքից, որը կօգնի ձեզ պատրաստվել ձեր երեխայի IEP հանդիպմանը: Հանդիպմանը պատրաստվելը կարող է օգնել ձեզ և շրջանային բաժնին միասին աշխատել՝ ստանալու լավագույն արդյունքը ձեր երեխայի համար:

Հարցեր, որոնք արժե տալ նախքան ձեր երեխայի IEP հանդիպումը.

Հարց	Պատասխան/նշումներ
Ի՞նչն է դուր գալիս ձեր երեխային դպրոցում:	
Ի՞նչը դուր չի գալիս ձեր երեխային դպրոցում:	
Ի՞նչն է հեշտ ստացվում ձեր երեխայի մոտ դպրոցում: Ո՞ր ոլորտներում է նա լավ դրսևորում իրեն: Հաշվի առեք գիտելիքների և սոցիալական/հուզական կարիքները:	
Ի՞նչն է դժվար ձեր երեխայի համար դպրոցում: Ո՞ր ոլորտներում նա լրացուցիչ աջակցության կարիք կունենա:	

<p>Դպրոցի անձնակազմը խոսե՞լ է դպրոցում ձեր երեխայի առաջադիմության հետ կապված անհանգստությունների մասին:</p>	
<p>Ձեր երեխան դպրոցից դուրս ծառայություններ ստանո՞ւմ է (օր.՝ խորհրդատուների, խոսքային թերապիայի բժիշկների ծառայություններ):</p>	
<p>Եթե այո, նշեք այդ ծառայությունները տրամադրող մարդկանց կոնտակտային տվյալները:</p>	
<p>Արդյո՞ք այդ արտաքին ծառայություններ մատուցողները կարող են ներդրում առաջարկել ձեր երեխայի IEP-ի համար:  <i>Հիշեք. դուք ունեք հրավուևք IEP հանդիպմանը հրավիրելու ցանկացած անձի, ով ճանաչում է ձեր երեխային:</i></p>	
<p>Ձեր երեխան ներկայումս ո՞ր դասարանում է սովորում:</p>	

<p>Եթե նա ավագ դպրոցում է, արդյո՞ք մոտ է ավարտելուն: Նա ստանալու է ատեստատ, թե՞ ավարտական հավաստագիր:</p>	
<p>Եթե ձեր երեխան ավագ դպրոցում է սովորում, նա ունի՞ անցումային շրջանի ծրագիր, որը կպատրաստի նրան ավարտելուց հետո կյաքին:</p>	
<p>Դուք նկատե՞լ եք բացեր ձեր երեխայի կարողությունների և նրա համադասարանցիների սովորականի նման զարգացող կարողությունների միջև:</p>	
<p>Ո՞րն է այն երեք ամենակարևոր բանը, որ կցանկանայիք ձեռք բերել այս IEP հանդիպումից:</p>	<ol style="list-style-type: none"> <li>1.</li> <li>2.</li> <li>3.</li> </ol>

Բացի վերոնշյալ հարցերին պատասխանելուց ձեր երեխայի առաջիկա IEP հանդիպումից առաջ ձեզ գուցե անհրաժեշտ լինի հավաքել և ուսումնասիրել հետևյալ կյուլթերը: Եթե այդ կյուլթերի պատճենները չունեք, կարող եք խնդրել պատճենը ձեր երեխայի դպրոցից: Դպրոցը կյուլթի կամ փաստաթղթի պատճենը պետք է տրամադրի 5 օրվա ընթացքում: Եթե ձեզ անհրաժեշտ է, որ այս կյուլթերից ցանկացածը թարգմանված լինի ձեր մայրենի լեզվով, պետք է գրավոր դիմեք շրջանային բաժնին՝ ձեզ թարգմանված օրինակ տրամադրելու համար:

1. Նախկին IEP-ներ (ամենավերջին IEP-ները հավանաբար կլինեն ուսումնասիրության համար ամենակարևոր փաստաթղթերը):
2. IFSP-եր կամ IPP-եր, եթե ձեր երեխան հանդիսանում կամ հանդիսացել է տարածաշրջանային կենտրոնի շահառու:
3. Հատուկ կարիքներով անձանց համար կրթության գնահատումներ:
4. Ձեր երեխայի IEP-ի ընթացիկ նպատակների իրագործման առաջընթացի հաշվետվություններ:
5. Ստանդարտացված հետազոտության վերջին արդյունքներ:
6. Հաշվետվությունների քարտեր:
7. Ձեր երեխայի բոլոր աշխատանքների նմուշները, եթե կարծում եք, որ դրանք կարևոր են առաջիկա IEP հանդիպման համար:
8. Դպրոցի կողմից հավաքագրված տվյալներ վարքագծի վերաբերյալ: Դրանք կարող են լինել անհամապատասխան վարքագծի դրսևորման դեպքերի մասին գրանցված տեղեկություններ, գրառումներ, թե քանի անգամ է դպրոցը կապ հաստատել ձեզ հետ վարքագծի հետ կապված խնդիրների համար և գրառումներ դասից ժամանակավոր դուրս հրավիրման/հեռացման դեպքերի մասին: Այս տեղեկությունը կարևոր է, եթե ձեր երեխան ունի կամ նրան անհրաժեշտ է Վարքագծի միջամտության պլան:
9. Հաճախումների մասին գրառումներ: